ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-25/201» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Երևան

26.08.2025թ.
ժամը 10:20

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Դանիելյան
անդամներ՝ Ա. Թովմասյան
Լ. Վասիլյան
Վ. Դավթյան,
քարտուղար՝ Զ. Կարապետյան

**Հայտերի բացման մասին**

(Հ. Դանիելյան)

«ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-25/201» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտերի բացման նիստը տեղի ունեցավ ք. Երևան, Թաիրովի 15, 307 սենյակ հասցեում, 2025 թվականի օգոստոսի 26-ին ժամը 10:20-ին:

**1. Տվյալներ հայտ ներկայացրած մասնակիցների վերաբերյալ**

«ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-25/201» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Կապի միջոցը էլ. փոստ, հեռ. համար |
|---|---|---|---|
| 1 | «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գ. Միքայելյան 19 | gexarquniqnairi@mail.ru<br>+374 93 18 44 18 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0

**2. Տվյալներ՝ ծրարի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին**

Հայտը պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0

**3. Տվյալներ՝ բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

## 4. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերը՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0

## 5. Մասնակցի առաջարկած գինը

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է՝

ՀՀ դրամ

| N | Չափաբաժնի անվանում | Նախահաշվային գինը թվերով (տառերով)/ ՀՀ դրամ/ | Մասնակցի անվանումը | Առաջարկվող գինը /ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ | Վճարվելիք ԱԱՀ-ի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «ՀՀ Սյունիքի մարզի, Սիսիան համայնքի, «Զանգեզուրի դարպասներ» հուշարձանի վերականգնման և տարածքի բարեկարգման» շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ | 275 097 | «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ | 270 000 | ------- | 270 000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0

## 6. Տվյալներ՝ ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի ներկայացրած փաստաթղթերը՝

1. Մասնակցի ներկայացրած փաստաթղթերում անհամապատասխանություններ չհայտնաբերեց:
2. Մասնակիցը ներառված չէ՝

• հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

• հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 6-րդ ենթակետը՝ 1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած (ընտրված) մասնակից ճանաչել՝ «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

## 7. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել: Հայտերի վերաբերյալ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 25-րդ ենթակետին համապատասխան հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0

## 8. Արդյունքների ամփոփման մասին

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանվում է հետևյալը՝ ընթացակարգին մասնակցել և հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________ Հ. Դանիելյան

Անդամներ՝ ____________ Ա. Թովմասյան

____________ Լ. Վասիլյան

____________ Վ. Դավթյան

Քարտուղար՝ ____________ Ջ. Կարապետյան